ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ

ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆԸ

«29» սեպտեմբերի 2017 թվականի № 120-Ն

ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 51-րդ հոդվածի, 54-րդ հոդվածի, 55-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով, հիմք ընդունելով «ՆԻԿՈԼ ՏՈՒՖ» ՍՊ ընկերության 2017թ. հունիսի 20-ի թիվ 5 դիմումը, հանքավայրի շահագործման նախագծի 2017թ օգոստոսի 14-ի «Շրջակա միջավայրի վրա ազդեցության» ԲՓ-72, ինչպես նաև 2017թ հուլիսի 27-ի «Արտադրական վտանգավոր օբյեկտի նախագծային փաստաթղթերի տեխնիկական անվտանգության» թիվ 1704 փորձաքննությունների դրական եզրակացությունները և ընդերքի գործակալության պետի զեկուցագիրը

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. «ՆԻԿՈԼ ՏՈՒՖ» ՍՊ ընկերությանը 38 տարի ժամկետով տրամադրել օգտակար հանածոյի արդյունահանման թիվ ՇԱԹ-29/568 թույլտվությունը՝ ՀՀ Շիրակի մարզի Բագրավանի պեմզային տուֆերի հանքավայրի «ԱԼԲԱ» տեղամասի 1.X=4481350 Y=8379314, 2.X=4481306 Y=8379316 3.X=4481279 Y=8379329 4.X=4481258 Y=8379367, 5.X=4481259 Y=8379388 6.X=4481267 Y=8379407 7.X=4481254 Y=8379430 8.X=4481257 Y=8379455 9.X=4481261 Y=8379460 10.X=4481267 Y=8379460 11. X=4481278 Y=8379470 12.X=4481290 Y=8379475 13.X=4481308 Y=8379468 14.X=4481323 Y=8379473 15.X=4481345 Y=8379472 16. X=4481360 Y=8379485 (տրված են WGS-84 (ՎԻ ՋԻ ԷՍ-84) (ARMREF 02) ազգային գեոդեզիական կոորդինատային համակարգով) արդյունահանում կատարելու նպատակով, հատկացնելով՝ 98000 մ^3. տուֆերի մարվող պաշար և լեռնահատկացման թիվ Լ-568 լեռնահատկացման ակտով տրված տարածքի՝ 1.X=4481394 Y=8379278, H=1051.0 (h=-6) 2.X=4481259 Y=8379300, H=1505.0 (h=0) 3.X=4481223 Y=8379363, H=1501.0 (h=0) 4.X=4481192 Y=8379464, H=1494.0 (h=0) 5.X=4481196 Y=8379494 H=1482 (h=0) 6.X=4481230 Y=8379520 H=1480.0 (h=0) 7.X=4481270 Y=8379541 H=1481.0 (h=0) 8.X=4481422 Y=8379571 H=1491.0 (h=0) 9.X=4481407 Y=8379506 H=1518.0 (h=0) 10.X=4481359 Y=8379469 H=1521.5 (h=-7.5)

11.X=4481351 Y=8379318 H=1520.0 (h=0) 12. X=4481402 Y=8379303 H=1518.0 (h=0) (տրված են WGS-84 (ՎԻ ՋԻ ԷՍ-84) (ARMREF 02) ազգային գեոդեզիական կոորդինատային համակարգով) եզրագծված 4.04 հա տարածքը:

2.Հանքի տարեկան արտադրողականությունը սահմանել՝ 2500 մ^3 տուֆային զանգված:

3. Աշխատակազմի ընդերքի գործակալության պետին՝

1) 2 օրվա ընթացքում նախապատրաստել սույն հրամանի 1-ին կետում նշված՝ ՀՀ Շիրակի մարզի Բագրավանի պեմզային տուֆերի հանքավայրի «ԱԼԲԱ» տեղամասի օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման պայմանագիրը և ծանուցել ընկերությանը՝ սույն հրամանը ստանալուց հետո 10-օրյա ժամկետում պայմանագիրն իր կողմից վավերացնելու մասին.

2) ընկերության կողմից պայմանագիրը վավերացվելուց հետո 10 օրվա ընթացքում, ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման պետական տուրքի վճարման անդորրագրի ներկայացումից անմիջապես հետո, ընկերությանը տրամադրել օգտակար հանածոների արդյունահանման իրավունքը հավաստող փաստաթղթերի փաթեթը.

3) ծանուցել ընկերությանը, որ սահմանված ժամկետներում պայմանագիրն իր կողմից չվավերացնելու և ընդերքօգտագործման իրավունքի փաթեթը չստանալու դեպքում, արդյունահանման իրավունք հայցելու դիմումը բավարարելու վերաբերյալ սույն հրամանը կճանաչվի ուժը կորցրած.

4) ապահովել համապատասխան գրառումների կատարումը օգտակար հանածոների արդյունահանման իրավունքի հաշվառման գրանցամատյանում:

4. «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի տնօրենին – ապահովել ֆոնդային փաստաթղթերում սույն հրամանից բխող համապատասխան գրառումների կատարումը՝ Ընդերքի գործակալության կողմից փաստաթղթերի փաթեթի ստացումից եռօրյա ժամկետում:

5. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից 2 ամսվա ընթացքում:

6. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել՝ ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ղեկավարին:

ԱՇՈՏ ՄԱՆՈՒԿՅԱՆ